

## Հայաստան

Տասն անհատների մահվան ելքով ոստիկանության և ընդդիմության ցուցարարների միջև տեղի ունեցած վտոցային բախումներից ավելի քան երեք տարի անց դեռևս չի կիրառվել հիմնավոր պատասխանատվություն իրավապահ մարմինների կողմից գործադրված անհամաչափ ուժի համար: Կառավարությունն ապաֆրեականացրեց զրպարտությունը, բայց կտրուկ մեծացրեց ֆինանսական տուգանքների չափը զրպարտության գործերով ֆաղաֆեցիական դատավարություններում: Իշխանությունները շարունակում են սահմանափակել հավաքների ազատությունը: Շարունակվում են ոստիկանությունում ձերբակալման ժամանակ տեղի ունեցող խուճապահարսների ու վատ վերաբերմունքի դեպքերը և կառավարությունն արդյունավետ կերպով չի ֆինել ազատագրվման, ինչպես նաև խաղաղ պայմաններում զինվորական ծառայության ընթացքում տեղի ունեցած մտահոգիչ ֆանսկայությամբ մահացության դեպքերը:

Հայաստանի միջազգային գործընկերները չեն ներդրել իրենց ազդեցության ողջ ներուժը հանուն մարդու իրավունքների վիճակի բարելավման:

### Պատասխանատվության բացակայություն անհամաչափ ուժի կիրառման համար

2011թ. ապրիլին նախագահ Սերժ Սարգսյանը հրահանգեց ջանքեր գործադրել առավել հիմնավոր ֆնելու անվտանգության ուժերի դերը մայրաքաղաք Երևանում 2008թ. մարտի 1-ին ընդդիմության ցուցարարների հետ տեղի ունեցած բախումներում, որոնց արդյունքում զոհվեց 10 մարդ՝ ներառյալ երկու ոստիկան: 2009թ. դեկտեմբերին դատապարտվեցին չորս ոստիկաններ, որոնք սակայն անմիջապես համաներում ստացան: 2011թ. մայիսի ընդհանուր համաներման շրջանակներում ազատ արձակվեցին բախումների կապակցությամբ դեռևս կալանքի տակ գտնվող բոլոր ֆաղաֆեցիական անձինք՝ ներառյալ երկու հայտնի ընդդիմադիր ֆաղաֆական գործիչներ Սասուն Միխայելյանն ու Նիկոլ Փաշինյանը:

### Հավաքների ազատությունը

2011թ. ապրիլին Երևանի իշխանությունները, 2008թ. մարտի բախումներից հետո առաջին անգամ, արտոնեցին ընդդիմադիր Հայ Ազգային Կոնգրեսին (ՀԱԿ) հանրահավաք անցկացնել Ազատության հրապարակում: Այդուհանդերձ, ընդդիմության ակտիվիստները հայտարարում են, որ իշխանությունները սահմանափակել են այլ ֆաղաֆներից ցուցարարների տեղաշարժման հնարավորությունները մասնակցելու ընդդիմության հերթական լայն հանրահավաքներին:

Հոկտեմբերին ոստիկանությունը կառավարության շենքի դիմաց ձերբակալեց Վարդգես Գասպարիին, ֆանի դեռ նա մասնակցում էր մի ֆանի տասնյակ զինծառայողների ծնողների և ակտիվիստների խաղաղ ցույցին, որոնք բողոքում էին խաղաղ պայմաններում զինծառայության ընթացքում տեղի ունեցող մեծ թվով մահվան դեպքերի կապակցությամբ:

Գասպարիին մեղադրանք է առաջադրվել խուլիգանության ու ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու համար, բայց երկու օր անց ազատ է արձակվել գրավի դիմաց:

2010թ. դեկտեմբերին դատարանը երկամյա պայմանական ազատազրկման դատապարտեց ընդդիմության ակտիվիստներ Սարգիս Գևորգյանին և Դավիթ Քիրամիջյանին՝ մեղադրանք ներկայացնելով խուլիգանության և ոստիկանին վիրավորանք հասցնելու համար, երբ վերջինս փորձել է կանխել ցուցարարների մուտքն Ազատության հրապարակ 2010թ. մարտին:

### **Խոստանգում և վատ վերաբերմունք**

Տեղական և միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցները նշում են ոստիկանությունում ձերբակալված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի մասին: Օգոստոսին Եվրոպայի խորհրդի Խոստանգումների կանխարգելման կոմիտեն (CPT) հրապարակեց հաշվետվություն իր 2010թ. իրականացրած այցի մասին, որը ներառում էր «զգալի թվով ստուգված և հետզհետե հայտարարություններ ձերբակալված անձանց նկատմամբ ֆիզիկական բռնությունների», ինչպես նաև խոստանգումների մասին՝ ենթադրաբար խոստովանական ցուցմունքների և այլ տեղեկությունների կորզման նպատակով:

Օգոստոսին ոստիկանության կողմից ծեծի ենթարկվեցին և ձերբակալվեցին ՀԱԿ-ի յոթ ակտիվիստներ այն բանից հետո, երբ երևանյան այգիներից մեկում նրանք միջամտել էին ոստիկանության կողմից մեկ այլ անձի, իրենց համոզմամբ ապօրինի, կանգնեցմանն ու ստուգմանը: Բժշկական ստուգումն ակտիվիստների մոտ արձանագրեց ուղեղի ցնցում: Ոստիկանությունը բուրբ յոթին մեղադրեց խուլիգանության և պաշտոնատար անձին վիրավորելու մեջ: Դատարանը կալանքի որոշում կայացրեց մեկ ակտիվիստի, Տիգրան Առաքելյանի, նկատմամբ՝ կիրառելով չորս ամսվա նախնական կալանք: Մինչ այս պահը դեռևս ֆեմոյան չեն ենթարկվել ոստիկանական գործողությունները:

Հունիսին ֆաղափարած հազուստով Երևանի ոստիկանության երկու աշխատակիցներ, գողության մեջ կասկածելով, կրակ արձակեցին և սպանեցին Արման Ենգիբարյանին: Ոստիկանությունը հիմնավորում է ուժի կիրառումը փախուստի պահին Ենգիբարյանի կողմից գազային ատրոհակից կրակ բացելու հանգամանքով: Տեղական իրավապաշտպան խմբերը ոստիկանության գործողությունները համարում են անհամաչափ: Ենգիբարյանի ատրոհակում չեն եղել մարտական վանդալներ և նրա զլխի ու որովայնի հրազենային վերքերը հուշում են, որ ոստիկանությունը չի փորձել նվազագույնի հասցնել մահվան ելքի հավանականությունը: Նախաֆեմոյանը եզրահանգել էր, որ ոստիկանության գործողությունները եղել են իրավաչափ, սակայն Ենգիբարյանի ընտանիքը բողոքարկում է այդ որոշումն այն հիմնավորմամբ, որ միջազգային իրավունքի տեսանկյունից չի տարվել արդյունավետ ֆեմոյան և, մասնավորապես այն պատճառով, որ նրանք, որպես ընտանիքի անդամներ, գրկված են եղել ֆեմոյանը մասնակցելու հնարավորությունից:

Չնայած մայիսի համաներման արդյունքում 590 բանտարկյալների ազատ արձակմանը, բանտերը շարունակում են մնալ գերբնակեցված՝ հանգեցնելով պահման պայմանների և ստանդարտների այնպիսի խախտումների, ինչպիսիք են օրինակ ոչ հիգիենիկ պայմանները, ոչ պատշաճ բուժօգնությունը և վարժանքի պակասը: Գերբնակեցումը հիմնականում պայմանավորված է դատարանների կողմից նախնական կալանքի որոշումների կայացման անհարկի չարաչափմամբ:

## **Մահացության դեպքեր կալանավայրերում**

Կալանավայրերում չբացահայտված հանգամանքներում մահացության դեպքերը նույնպես բացասաբար են ազդում մարդու իրավունքների հայաստանյան ցուցանիշների վրա: 2010թ. հոկտեմբերին Վանաձորում նախնական կալանքից երկու շաբաթ անց մահացավ ոստիկանության սպայի մոր սպանության մեջ մեղադրվող Սլավիկ Ոսկանյանը: Նրա ընտանիքի պնդմամբ Ոսկանյանը մահացել է փտախտից (գանգրենա), որի պատճառ է դարձել կալանքի ընթացքում ստացված վերքի վարակումը և դրա ոչ պատշաճ բուժումը: Հարուցված քրեական գործը կարգվեց՝ եզրակացնելով, որ բանտային բժշկի անվտանգությունը պատճառ չի հանդիսացել Ոսկանյանի մահվան համար: Քննությունը երբեք չի անդրադարձել այն հարցին, թե ինչ հանգամանքներում է Ոսկանյանը ստացել նշված վերքերը, որոնք հանգեցրել են նրա մահվանը:

2010թ. նոյեմբերին դատարանն ութ տարվա ազատազրկման դատապարտեց Ջարենցավանի ոստիկանության ֆենչական բաժնի նախկին պետ Ասոտ Հարությունյանին պաշտոնական դիրքի չարաշահման և Վահան Խալաֆյանին ինֆնասպանության հասցնելու մեղադրանքով, ով մահացել էր 2010թ. ապրիլին ոստիկանությունում կալանքի ընթացքում դանակով հասցված վերքերից: Տեղական իրավապաշտպան խմբերը և Խալաֆյանի ընտանիքը համոզված են, որ նա սպանվել է դանակահարությամբ:

2011թ. մայիսին դատարանը չեղյալ համարեց դատախազի 2011թ. մարտի որոշումը 2007թ. Լևոն Գուլյանի մահվան գործի ֆննությունը դադարեցնելու մասին: Պաշտոնական կողմի ներկայացմամբ Լևոն Գուլյանը ոստիկանության բաժանմունքից փախուստի դիմելով՝ դուրս է ցատկել երկրորդ հարկից: Գուլյանի հարազատները պնդում են, որ նրան խոստանգել են:

## **Խախտումները բանակում**

Տեղական իրավապաշտպան խմբերը հայտնում են բանակում վատ վերաբերմունքի, նեոնանների և խաղաղ պայմաններում ահազանգոյ քվով մահացության դեպքերի մասին: Հելսինկյան ֆալաֆացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2011թ. հոկտեմբեր ամսին հայտարարել է խաղաղ պայմաններում մահացության առնվազն 17 դեպքերի մասին: Օրինակ՝ Թորգոմ Սարուխանյանը, 21 տարեկան, զոհվել է փետրվարին, իբր իր կողմից արձակված հրազենային վնասվածքից: Պաշտպանության նախարարության ֆննիչները ձեռքբերել են երեք զինծառայողների՝ ինֆնասպանության հասցնելու մեղադրանքով: Սարուխանյանի ընտանիքը պնդում է, որ նա սպանվել է և որ նրա մարմնի վրա առկա են ձեռքի հետքեր:

2010թ. դեկտեմբերին դատարանը պաշտոնական դիրքի չարաշահման մեղադրանքով մայր Սասուն Գալստյանին դատապարտեց երեք տարվա ազատազրկման: 2010թ. սեպտեմբերին YouTube-ում հայտնվեց մի տեսանյութ, որտեղ Գալստյանը ծեծում և նվաստացնում էր երկու զինծառայողի:

## **Մամուլի ազատություն**

2010թ. մայիսին Հայաստանն ապաքրեականացրեց գրադարությունը, սակայն ֆալաֆացիական օրենսգրքի փոփոխություններով սահմանվեցին բարձր դրամական տուգանքներ գրադարության և վիրավորանքի համար՝ հանգեցնելով դատական գործերի անի ընդդեմ թերթերի հատկապես պետական պաշտոնյաների կողմից: Որոշ դեպքերում դատարանների կողմից անհամամասնորեն մեծ չափով վնասների հատուցման նշանակումները վտանգում են թերթերի

գոյությունը: Լրագրողներն ու խմբագիրները հայտարարում են, որ բարձր տուգանքները սահմանափակում են խոսքի ազատությունը:

2011թ. փետրվարին դատարանը ընդդիմությանը հարող Հայկական Ժամանակ օրաթերթին պարտադրեց կառավարության հետ կապված երեք գործարար մարդկանց վնարել մոտավորապես 16 500 ԱՄՆ դոլար որպես վնասի վոխհատուցում և հերքել պնդումները, որ նրանք ներգրավված են քրեական գործունեության մեջ (միջին ամսական աշխատավարձը Հայաստանում կազմում է 90 ԱՄՆ դոլար): Թերթը նվիրատվություններ հայթայթեց իր ընթերցողներից որպեսզի վնարի տուգանքը և շարունակի հրատարակվել:

Հունիսին դատարանը ընդդիմադիր *Ժամանակ* օրաթերթին պարտադրեց նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանին վնարել մոտավորապես 8 250 ԱՄՆ դոլար վերջինիս իր նախագահության ընթացքում և դրանից հետո կոռուպցիոն բիզնես գործարքներում մեղադրող նյութեր տպագրելու համար՝ *Ժամանակ* օրաթերթին դնելով լուրջ ֆինանսական ճնշման տակ: Քոչարյանի կողմից ներկայացված գրպարտության մեկ այլ դատական հայցով դատարանը ստուգեց *Հրապարակ* օրաթերթի բանկային հաշիվները մինչ դատավճի կայացումը:

Մեկ առանձին գործով երևանյան դատարաններից մեկը, դատական ղեկարարամենտի ղեկավարի կողմից ներկայացված հայցի հիման վրա, սեպտեմբերին ստուգեց *Հրապարակ*-ի մոտ 8 000 ԱՄՆ դոլարի ակտիվները և արգելեց նյութեր հրատարակել իր դեմ հարուցված գրպարտության գործի մասին:

Փետրվարին դատարանը ձևական դատավարությամբ պարտավորեցրեց *Երկիր* օրաթերթին վնարել 800 ԱՄՆ դոլար իշխանամետ պատգամավոր Տիգրան Արզանցյանին, որին թերթն իր հոդվածներից մեկում անվանել էր «դեմոկրատ»:

Բազմակարծության պակասը մամուլում դեռևս մնում է որպես խնդիր: 2010թ. դեկտեմբերին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, որը պատասխանատու է հանախականությունների արտոնագրերի համար, 13-րդ անգամ մերժեց Ա.1+ անկախ հեռուստաընկերության արտոնագիր ստանալու հայտը, չնայած 2008թ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վնուի, ըստ որի Հայաստանը խախտել էր խոսքի ազատությունը՝ բազմիցս և կամայականորեն մերժելով հեռուստաընկերության արտոնագիր ստանալու հայտերը:

Իշխանությունները նաև մերժել են ԱԼՄ հեռուստաընկերության քվային հեռարձակման արտոնագիր ստանալու հայտը, որի սեփականատերը հայտարարել էր իր ֆադաֆական հավակնությունների մասին, ինչպես նաև Գյումրիում հիմնված ԳԱԼ հեռուստաընկերության հայտը, չնայած նրան, որ ԳԱԼ-ն իր գործող արտոնագրով կարող է հեռարձակվել անալոգային հանախականություններով մինչև 2015թ.: Սկսած 2007թ.-ից ԳԱԼ-ի նկատմամբ հարուցվել են ակնհայտ ֆադաֆական դրպատճառներ ունեցող դատական գործեր և պետական ատյանների կողմից ենթարկվել է ոտնձգությունների, ինչը փաստորեն կապված է եղել ընդդիմադիր կուսակցության գործունեության լուսաբանման հետ:

### **Մարդու իրավունքների պաշտպաններ**

Օգոստոսին դատարանը գրպարտության գործով լսեց Լեոնապատի գյուղապետ Վանա Եղիազարյանի հայցն ընդդեմ իրավապաշտպան, Հելսինկյան ֆադաֆացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար, Արթուր Սաֆունցի, այն

բանից հետո, երբ Սաֆունցը թերթին տված հարցազրույցում մեղադրել էր Եղիազարյանին յուրացումների և պաշտոնական դիրքի չարաճահման մեջ ու ֆինադատել իշխանություններին, որ չեն ցանկանում ֆինուրյան առնել հայտարարությունները: Դատավարությունը շարունակվում է:

### **Հիմնական միջազգային դերակատարներ**

Հայաստանի մի շարք միջազգային գործընկերներ սահմանափակեցին կառավարությանն ուղղված իրենց ֆինադատությունը կապված մարդու իրավունքների վիճակի հետ:

Եվրոպական հարևանության ֆորմականության մայիսի գեկույցում Եվրամիությունը նշել էր, Հայաստանի դատական իշխանության անկախության պակասը, ՋԼՄ-ներում բազմակարծության սահմանափակումը, վատ բանտային պայմանները և վատ վերաբերմունքի դեպքերի ոչ պատշաճ ֆինուրյունը, սակայն թերացել էր հստակ ընդգծել մարդու իրավունքների գծով այն կոնկրետ բարեփոխումների մասին, որոնք պարտադիր են Հայաստանի կառավարության հետ իրենց ունեցած գործակցության շրջանակներում:

Որպես Եվրոխորհրդի անդամ պետություն Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման մասին 2011թ. հոկտեմբերին ընդունված բանաձևում, կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովը անհարկի գովեստի էր արժանացրել Հայաստանին՝ նշելով. - «ի վերջո փակված կարելի է համարել 2008թ. մարտյան իրադարձությունների էջը»: Բանաձևն, այդուհանդերձ, վերահաստատել էր մտահոգությունները բախումների ընթացքում 10 մահվան դեպքերի համար պատասխանատվության բացակայության մասին:

Հայաստանի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի, Թոմաս Համմարբերգի, մայիսի գեկույցը կենտրոնացել էր խոսքի, հավաքների ու միավորումների ազատության, ինչպես նաև բանակում խախտումների վրա: Նա կոչ արեց իշխանություններին պատասխանատվության ենթարկել անհամաչափ ուժի գործադրման պատասխանատուներին և 2008թ. մարտյան բախումների մեղավորներին:

Ապրիլին իր եզրափակիչ դիտարկումներում, ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովը կոչ է արել իշխանություններին, ի թիվս այլ բաների, ավելի շատ պայքարել ընդդեմ անհատների և խմբերի դեմ խտրականության դրսևորումների: